

+

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում

2 դեկտեմբերի 2008թ.

Կենտրոնական բանկի նախագահ

..... Արթուր Զավադյան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ
ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ**

ԵՐԵՎԱՆ - 2008

Գլուխ 1 . Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը սահմանում է ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող շուկայում առևտրին թույլտվության ենթակա բաժնետոմսերին և պարտատոմսերին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից տարբերակիչ ծածկագրեր շնորհելու և դրանց օգտագործման կարգը:

1.2. Սույն կարգի դրույթները չեն տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1), 2), 3), 7) կետերով սահմանված արժեթղթերի վրա:

1.3. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1.3.1. **«Թողարկող».** իրավաբանական անձ, որը Դեպոզիտարիայի հետ կնքել է անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագիր:

1.3.2. **«Կարգավորվող շուկա»** է համարվում հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգը, որը կանոնավոր կերպով արժեթղթերի առքի և վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է արժեթղթերով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ: Կարգավորվող շուկան ներառում է ֆոնդային բորսան և այլ կարգավորվող շուկաները.

1.3.3. **«Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիր»** տարբերակիչ ծածկագիր, որը շնորհվում է ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող շուկայում առևտրին թույլտվության ենթակա բաժնետոմսերին և պարտատոմսերին և օգտագործվում է ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող շուկայում շրջանառվող բաժնետոմսերի և պարտատոմսերի միանշանակ տարբերակման և դրանցով կատարվող գործարքներով վերջնահաշվարկների հստակեցման նպատակով:

1.3.4. Սույն կարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) և Դեպոզիտարիայի կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Արժեթղթերին շնորհվող տարբերակիչ ծածկագրի կառուցվածքը և կազմման մեթոդները

2.1. Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (այսուհետ՝ ԱՏԾ) բաղկացած է երեք մասերից՝ երկրի ծածկագրից (երկու նիշ), հիմնական համարից (ինը նիշ) և ստուգիչ թվից (մեկ նիշ): ԱՏԾ-ի նիշերը համարակալվում են ձախից աջ:

2.2. ԱՏԾ-ն ունի հետևյալ կառուցվածքը.

Աղյուսակ 1

Երկրի ծածկագիր	Հիմնական համար				Ստուգիչ թիվ
	Թողարկողի ծածկագիր	Արժեթղթերի տեսակ	Արժեթղթերի էական հատկանիշներ	Թողարկողի գտնվելու վայրը (ըստ մարզերի)	
X ₁ X ₂	X ₃ X ₄ X ₅ X ₆	X ₇	X ₈ X ₉	X ₁₀ X ₁₁	X ₁₂

2.3. ԱՏԾ-ում օգտագործվում են լատինական այբուբենի մեծատառերը և արաբական թվանշանները: Չի թույլատրվում ԱՏԾ-ում օգտագործել լատինական այբուբենի «O» և «I» տառերը (բացառություն է կազմում Lռռու մարզի ծածկագիրը՝ «LO»):

2.4. ԱՏԾ-ի առաջին և երկրորդ նիշերը՝ X₁X₂-ը, արտահայտում են Հայաստանի Հանրապետության միջազգային ծածկագիրը՝ «AM»:

2.5. ԱՏԾ-ն փոխվում է հիմնական համարի նիշերով արտահայտված դրույթներից որևէ մեկի (բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում թողարկողի գտնվելու վայրի (մարզի)) փոփոխության դեպքում:

2.6. ԱՏԾ-ի երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ նիշերը՝ X₃X₄X₅X₆-ը, ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից շնորհվող տառերով և/կամ թվերով արտահայտված թողարկողի տարբերակիչ ծածկագիրն է, որը կազմվում է թողարկողի հայերեն անվանմանը համապատասխան:

2.7. ԱՏԾ-ի յոթերորդ նիշը X₇-ը սահմանում է արժեթղթերի տեսակը.

- 2.7.1. „S,, հասարակ անվանական բաժնետոմսերի համար,
- 2.7.2. „P,, արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար,
- 2.7.3. „B,, պարտատոմսերի համար
- 2.7.4. „H,, այլ տեսակի արժեթղթերի համար:

2.8. ԱՏԾ-ի ութերորդ և իններորդ նիշերը՝ X₈X₉-ը, Դեպոզիտարիայի կողմից որոշվող թվային կամ տառային ծածկագրեր են, որոնք լրացվում են ելնելով սուբյեկտներին արժեթղթերով հավաստվող իրավունքների պատկանելիության սկզբունքից և տվյալ տեսակի արժեթղթերի էական հատկանիշներից (անվանական արժեքից, արժեթղթերով հավաստվող իրավունքների ծավալից, ժամկետայնությունից և այլն), մասնավորապես.

- 2.8.1. հասարակ անվանական բաժնետոմսերի համար՝ 10
- 2.8.2. արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝
 - 2.8.2.1. հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ K1
 - 2.8.2.2. փոփոխական շահութաբաժնով արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ C1
 - 2.8.2.3. կուտակման արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ A1
 - 2.8.2.4. փոխարկելի արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ E1
 - 2.8.2.5. այլ տեսակի արտոնյալ անվանական բաժնետոմսերի համար՝ D1

2.8.3. պարտատոմսերի

2.8.3.1. X₈ նիշը սահմանում է ժամկետայնությունը, մասնավորապես.

- 2.8.3.1.1. մինչև 3 ամիս մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ 3
- 2.8.3.1.2. 3-ից 6 ամիս մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ 6
- 2.8.3.1.3. 6-ից 9 ամիս մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ 9
- 2.8.3.1.4. 9-ից 12 ամիս մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ 1
- 2.8.3.1.5. 12 ամսից ավելի մարման ժամկետով պարտատոմսերի համար՝ 2

2.8.3.2. X₉ նիշը սահմանում է թողարկման հերթական համարը՝ 1-ից մինչև 9-րդ թողարկումների համար 1-ից 9-ը թվանշանները, իսկ 10-րդ թողարկումից սկսած լատինական այբուբենի տառերը՝ A, B, C և այլն:

2.9. ԱՏԾ-ի տասներորդ և տասնմեկերորդ նիշերը՝ X₁₀X₁₁-ը, արժեթղթերի ռեզիդենտ թողարկողի գտնվելու վայրի տարածաշրջանն արտահայտող Հայաստանի Հանրապետության մարզի ծածկագիրն է (ըստ աղյուսակ 2-ի):

Հայաստանի Հանրապետության մարզերի ծածկագրերը բերված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Արագածոտն	AG	Լոռի	LO
Արարատ	AR	Շիրակ	SH
Արմավիր	AV	Սյունիք	SU
Գեղարքունիք	GR	Վայոց Ձոր	VD
Երևան	ER	Տավուշ	TV
Կոտայք	KT		

2.10. ԱՏԾ-ի տասներկուերորդ նիշը՝ X_{12} -ը, ստուգիչ թիվն է: ԱՏԾ-ի ստուգիչ թիվը հաշվարկվում է ԱՏԾ-ի նախորդ նիշերի լրացումից հետո՝ չորս հաջորդական քայլերով: Քայլերի հերթականությունը հետևյալն է՝

Քայլ 1: ԱՏԾ-ում տառային նիշերը փոխարինվում են համապատասխան թվերով՝
Աղյուսակ 3-ին համապատասխան:

Աղյուսակ 3

0=0	6=6	C=12	I=18	O=24	U=30
1=1	7=7	D=13	J=19	P=25	V=31
2=2	8=8	E=14	K=20	Q=26	W=32
3=3	9=9	F=15	L=21	R=27	X=33
4=4	A=10	G=16	M=22	S=28	Y=34
5=5	B=11	H=17	N=23	T=29	Z=35

Ստացված շարքի երկնիշ թվերի տասնավորներ և միավորներ ցույց տվող թվերը դիտվում են որպես շարքի առանձին անդամներ:

Քայլ 2: Յուրաքանչյուր թիվը բազմապատկվում է համապատասխան գործակցով: Շարքի կենտ դիրքերում գտնվող թվերի համար գործակիցը 2 է, գույգ դիրքերում գտնվող թվերի համար՝ 1: Շարքում նիշերի դիրքերի հաշվառումը կատարվում է աջից ձախ:

Քայլ 3: Նախորդ քայլում ստացված շարքի բոլոր թվերը գումարվում են:

Կրկին, շարքի երկնիշ թվերի տասնավորներ և միավորներ ցույց տվող թվերը դիտվում են որպես շարքի առանձին անդամներ:

Քայլ 4: Եթե հանրագումարի արդյունքում ստացված թիվը բազմապատիկ է տասին, ապա ստուգիչ թիվը «0» է: Այլապես, ստուգիչ թիվը հաշվարկվում է, երրորդ փուլում ստացված թիվը հանելով այդ թվից մեծ և տասին բազմապատիկ թվերից ամենափոքր թվից:

Գլուխ 3. ԱՏԾ-ի շնորհման ընթացակարգը և ԱՏԾ-ի շնորհման պայմանագրի կնքումը

3.1. Թողարկողը ԱՏԾ-ի շնորհման համար կարող է Գեպոզիտարիային դիմել միայն ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորին արժեթղթերի ցուցակման դիմում ներկայացնելուց հետո:

3.2. Գեպոզիտարիան թողարկողի դիմումը (հավելված 1) ստանալու պահից՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում հարցում է անում ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորին՝ տվյալ թողարկողի արժեթղթերը ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող շուկայում առևտրին թույլտվության ենթակա լինելու վերաբերյալ:

3.3. ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող շուկայում թողարկողի արժեթղթերի առևտրի թույլտվության վերաբերյալ դրական եզրակացության մասին տեղեկանքը ստանալուց և Թողարկողի կողմից Պայմանագրի կնքման համար

Դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»-ով սահմանված չափով վճարը վճարելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Դեպոզիտարիան Թողարկողի հետ կնքում է ԱՏԾ-ի շնորհման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

3.4. Պայմանագրի կնքման և ԱՏԾ-ի շնորհման համար հիմք են ծառայում տվյալ Թողարկողի հետ կնքված «Անվանական արժեթղթերի (Պարտատոմսերի) սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագրի» կնքման համար Դեպոզիտարիա ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները:

3.5. Եթե ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող շուկայում թողարկողի արժեթղթերի առևտրի թույլտվության վերաբերյալ ստացվել է բացասական պատասխան, ապա Թողարկողի դիմումը մերժվում է և Դեպոզիտարիայի կողմից Պայմանագիր չի կնքվում:

Գլուխ 4. ԱՏԾ-ի շնորհման պայմանագրի ժամկետը

4.1. ԱՏԾ-ի շնորհման Պայմանագիրը բաժնետոմսերի համար կնքվում է անժամկետ, իսկ պարտատոմսերի համար՝ այդ պարտատոմսերի մարման ժամկետով՝ երկկողմանի վաղաժամկետ լուծման իրավունքով:

4.2. ԱՏԾ-ն կարող է դադարել հետևյալ դեպքերում.

- 4.2.1. Պայմանագրի ժամկետի ավարտի հետևանքով Պայմանագրի դադարման դեպքում:
- 4.2.2. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում,
- 4.2.3. ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից թողարկողի տվյալ արժեթղթերի սպացուցակման դեպքում:

4.3. ԱՏԾ շնորհված արժեթղթերի վերաբերյալ գրանցված տեղեկությունների փոփոխության դեպքում թողարկողը պարտավոր է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Դեպոզիտարիա ներկայացնել այդ փոփոխությունները և դրանք հավաստող փաստաթղթերը:

Գլուխ 5. Ծնորհված ԱՏԾ-ների տեղեկատվական բազայի կառավարումը (վարումը) և հրապարակումը

5.1. Դեպոզիտարիան պարտավոր է.

- 5.1.1. Պայմանագրի կնքման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողի արժեթղթերին ԱՏԾ շնորհելու մասին ծանուցել ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորին և Թողարկողին, ծանուցման մեջ նշելով շնորհված ԱՏԾ-ն: Ծանուցումը (տես Հավելված 2 և 3) կարող է հանձնվել առձեռն, ուղարկվել պատվիրված նամակով կամ ՀՀ կենտրոնական բանկի ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցի միջոցով:
- 5.1.2. ԱՏԾ-ի դադարելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցել ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորին և Թողարկողին, ծանուցման մեջ նշելով ԱՏԾ-ի դադարելու պատճառները: Ծանուցումը (տես Հավելված 4 և 5) կարող է հանձնվել առձեռն, ուղարկվել պատվիրված նամակով կամ ՀՀ կենտրոնական բանկի ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցի միջոցով:

Գլուխ 6. Եզրափակիչ դրույթներ

- 6.1. Սույն կարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի կողմից:
- 6.2. Սույն կարգի փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման պահից:
- 6.3. Սույն կարգի դրույթները չեն տարածվում դրա գրանցման պահի դրությամբ Հայաստանի ֆոնդային բորսայում արդեն իսկ ցուցակված արժեթղթերի վրա՝ եթե Օրենքով այլ բան սահմանված չէ:

Հաստատված է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ
Դիտորդ խորհրդի 13.06.2008թ.
թիվ 3 որոշմամբ

Յոհան Ֆրեդիով

«Հավելված 1»

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ
տնօրեն՝ _____-ին

ԳԻՍՈՒՄ

Խնդրում ենք « _____ » ----ԲԸ -----հատ-----
(Թողարկողի անվանումը) (արժեթղթերի քանակը) (անվանական արժեքը)
-----ին
(պարտատոմսերի դեպքում՝ մարման ժամկետը, տոկոսային եկամտաբերությունը) (արժեթղթերի տեսակը և դասը)
շնորհել արժեթղթերի տարբերակիչ ծածկագիր և ցանկություն ենք հայտնում կնքել
«Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի շնորհման պայմանագիր»:

Հեռախոս՝

« _____ » ----ԲԸ
(Թողարկողի անվանումը)
Գործադիր մարմնի ղեկավար՝ -----
(ստորագրություն)

Կ.Տ.

«Հավելված 2»

«-----» ---ԲԸ
(Թողարկողի անվանումը)
Գործադիր մարմնի ղեկավար՝
-----ին
(անուն, ազգանուն)

Հայտնում ենք, որ հիմք ընդունելով 200_ -ի _____ -ին «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի և «_-----_» ---ԲԸ
(Թողարկողի անվանումը)
միջև կնքված «Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի շնորհման պայմանագիր»-ը՝
«_-----_» ---ԲԸ -----հատ-----
(Թողարկողի անվանումը) (արժեթղթերի քանակը) (անվանական արժեքը)
-----ին
(պարտատոմսերի դեպքում՝ մարման ժամկետը, տոկոսային եկամտաբերությունը) (արժեթղթերի տեսակը և դասը)
շնորհված արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրն է ----- :
Վերոնշյալ արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի կիրառության ժամկետն է _-----:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ տնօրեն՝ -----
(ստորագրություն)

«Հավելված 3»

«-----» ---ԲԸ
(ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի անվանումը)
Տնօրեն՝ _____-ին

Հայտնում եմք, որ հիմք ընդունելով ----- «ՀԱՅԱՍՏԱՆԻ
(օր, ամիս, տարի)
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի և «_-----_» ---ԲԸ
(Թողարկողի անվանումը)
միջև կնքված «Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի շնորհման պայմանագիր»-ը,
«_-----_» ---ԲԸ -----հատ-----
(Թողարկողի անվանումը) (արժեթղթերի քանակը) (անվանական արժեքը)
-----ին
(պարտատոմսերի դեպքում՝ մարման ժամկետը, տոկոսային եկամտաբերությունը) (արժեթղթերի տեսակը և դասը)
շնորհվել է ----- արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը:
Վերոնշյալ արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի կիրառության ժամկետն է -----:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ տնօրեն՝ -----
(ստորագրություն)

«Հավելված 4»

«-----» ---ԲԸ
(Թողարկողի անվանումը)
Գործադիր մարմնի ղեկավար՝
-----ին
(անուն, ազգանուն)

Հայտնում ենք, որ -----ի դրությամբ դադարեցվել է -----
(օր, ամիս, տարի) (օր, ամիս, տարի)
-----ին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի և
(օր, ամիս, տարի)
«_ -----» ---ԲԸ միջև կնքված «Արժեթղթերի տարբերակիչ
(Թողարկողի անվանումը)
ծածկագրի շնորհման պայմանագիր»-ը:

Ելնելով վերոնշյալից -----ից «_ -----_» ---ԲԸ
(օր, ամիս, տարի) (Թողարկողի անվանումը)
-----հատ-----
(արժեթղթերի քանակը) (անվանական արժեքը) (պարտատոմսերի դեպքում՝ մարման ժամկետը, տոկոսային
եկամտաբերությունը)
-----ի -----տարբերակիչ ծածկագիրը դադարում է
(արժեթղթերի տեսակը և դասը)

գործել:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ տնօրեն՝ -----
(ստորագրություն)

«Հավելված 5»

«-----» ---ԲԸ
(ՀՀ կարգավորվող շուկայի օպերատորի անվանումը)
Տնօրեն՝ _____-ին

Հայտնում ենք, որ -----ի դրությամբ դադարեցվել է -----
(օր, ամիս, տարի) (օր, ամիս, տարի)
-----ին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի և
(օր, ամիս, տարի)
«_ -----» ---ԲԸ միջև կնքված «Արժեթղթերի տարբերակիչ (Թողարկողի
անվանումը)
ծածկագրի շնորհման պայմանագիր»-ը:
Ելնելով վերոնշյալից -----ից «_ -----_» ---ԲԸ
(օր, ամիս, տարի) (Թողարկողի անվանումը)
-----հատ-----
(արժեթղթերի քանակը) (անվանական արժեքը) (պարտատոմսերի դեպքում՝ մարման ժամկետը, տոկոսային
եկամտաբերությունը)
-----ի -----տարբերակիչ ծածկագիրը դադարում է
(արժեթղթերի տեսակը և դասը)

գործել:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ տնօրեն՝ _____
(ստորագրություն)

